ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

<u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2021/82, 14.09.2021թ.

Բողոք բերող անձ՝ «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ

Պատվիրատու՝ Մասիսի համայնքապետարան

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ԱՄՄՔ-ԳՀԾՁԲ-21/29» գնանշման հարցում

Գնման առարկան՝ Մասիս քաղաքի թիվ 1 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի, նախկին մարզադպրոցի, ՄՊՍԿ և ՔԿԳ ՀՈԱԿ-ների մ/շ հիմնանորոգման և ջեռուցման համակարգի անցկացման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել «ԱՄՄՔ-ԳՀԾՁԲ-21/29» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. դադարեցնել հանձնաժողովի 10.09.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ՝ «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ի հայտը՝ որակավորման չափորոշիչ և աշխատանքային ռեսուրսների փորձառությունների մասով 0 տոկոս գնահատելու մասին որոշումը,
2. դադարեցնել՝ դադարեցնել Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով «Իրտիգ» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին որոշումը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ԱՆԱՆԻԿՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻՆ

Բողոք բերող՝ «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ
Հասցե՝ ՀՀ, ք. Արթիկ, Բաղրամյան 1/2
հեռ: (+374) 77 08-65-08
էլ.փոստ՝ knyazjanvvs@mail.ru

Պատվիրատու՝ Մասիսի համայնքապետարան
Հասցե՝ ՀՀ, Արարատի մարզ, Մասիս
Կենտրոնական հրպ., 4 շենք

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
ՄԱՍԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-Ի, ՆԱԽԿԻՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ, ՄՊՍԿ և ՔԿԳ ՀՈԱԿ-ՆԵՐԻ Մ/Շ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՋԵՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ, ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԱՄՄՔ-ԳՀԾՁԲ-21/29 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Բողոք

Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը.

Մասիսի համայնքապետարանի կարիքների համար՝ հայտարարվել է "ԱՄՄՔ-ԳՀԾՁԲ-21/29 " ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ն:

Ընթացակարգի 10.09.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է, որ «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ի հայտի որակավորման և աշխատանքային փորձառությունների տոկոսային հանրագումարը 0 է և պատճառն այն է, որ Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտի փաթեթի փաստաթղթերի հետ չեն կցվել աշխատանքային ռեսուրսներ և որակավորման չափորոշիչներն հիմնավորող փաստաթղթերը /վերը նշված փաստի մասին տեղեկացել ենք բանավոր՝ հանձնաժողովի կողմից/:

Արդյունքում www.gnumner.am կայքում հրապարակվել է թիվ 3 արձանագրությունը, որի եզրափակիչ մասում արձանագրվել է, որ Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվում <<Իրտիզ>> ՍՊԸ-ն /թիվ 3 արձանագրությունը կցվում է/:

Իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

Ինչպես արդեն նշել ենք, Մասիսի համայնքապետարանի կարիքների համար հայտարարվել է "ԱՄՄՔ-ԳՀԾՁԲ-21/29" ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ն:

Ընթացակարգի 10.09.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է, որ «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ի հայտի որակավորման և աշխատանքային ռեսուրսների փորձառությունների տոկոսային հանրագումարը 0 է և պատճառն այն է, որ Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտի փաթեթի փաստաթղթերի հետ չեն կցվել աշխատանքային ռեսուրսներ և որակավորման չափորոշիչներ հիմնավորող փաստաթղթերը:

Այնուհետև www.gnumner.am կայքում հրապարակվել է թիվ 3 արձանագրությունը, որի եզրափակիչ մասում արձանագրվել է, որ Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվում <<Իրտիգ>> ՍՊԸ-ն:

Տվյալ պարագայում "ԱՄՄՔ-ԳՀԾՁԲ-21/29" ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ի հայտը՝ որակավորման և աշխատանքային ռեսուրսների փորձառությունների մասով 0 տոկոս գնահատելով գործել է ոչ իրավաչափ, մասնավորապես՝ գնահատող հանձնաժողովի կողմից «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ին չի տրամադրվել որևէ շտկման հնարավորություն, որը թույլ կտար մասնակցին գնահատող հանձնաժողովին ներկայացնելու որակավորման և աշխատանքային ռեսուրսների փորձառությունների մասով հիմնավորող փաստաթղթեր /կցվում են/ և որի արդյունքում արդեն Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից կարող էր ճանաչվել «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Պարտավորեցնել "ԱՄՄՔ-ԳՀՇՁԲ-21/29" ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել հանձնաժողովի 10.09.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ՝ «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ի հայտը՝ որակավորման չափորոշիչ և աշխատանքային ռեսուրսների փորձառությունների մասով 0 տոկոս գնահատելու մասին որոշումը:
2. Պարտավորեցնել "ԱՄՄՔ-ԳՀՇՁԲ-21/29" ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով <<Իրտիգ>> ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին որոշումը:

Հարգանքով՝

«Վահրամ Կնյազյան» Ա/Ձ՝

13.09.2021թ.